



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՒԱԿԱՏԱՐ

[Handwritten signature]



Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

10 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 92

Ձեռնարկողը՝

<<Տեխնոման>> ՍՊԸ

Գործունեությունը՝

Գեղարքունիքի մարզի Լիճքի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 5P հորատանցքի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գեղարքունիքի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ՝



[Handwritten signature]

Ռ. Ոսկանյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 92

<29> 10 2018թ.

**<< Տեխնոման>> ՍՊԸ կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Լիճքի
ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 5Մ հորատանցքի օգտակար
հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն**

Ձեռնարկող՝

<< Տեխնոման>> ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն /Ա կատեգորիա/

Տեղադրման վայրը՝

<< Գեղարքունիքի մարզ, Լիճք համայնք

<<Տեխնոման>> ՍՊԸ նախատեսում է << Գեղարքունիքի մարզի Լիճքի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 5Մ հորատանցքով հաշվարկված և հաստատված պաշարից 50 տարի ժամկետով իրականացնել հանքային ջրի արդյունահանում՝ ածխաթթու գազի կորզման նպատակով: Հորատանցքի տարածքը գտնվում է Լիճք համայնքի տարածքում, սեփականության իրավունքով հողօգտագործողի տնամերձ հողատարածքում: Հանքավայրի անմիջական հարևանությամբ անցնում է Երևան-Սևան-Վարդենիս մայրուղին:

Լիճքի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի հիդրոերկրաբանական հետախուզական աշխատանքները կատարվել են 1968-1971թթ.-ին, որոնց արդյունքում հաշվարկվել են ածխաթթվային հանքային ջրի և ազատ ածխաթթու գազի շահագործողական պաշարները: Նախկին ԽՍՀՄ Պաշարների Պետական Հանձնաժողովի (ՊՊՀ) կողմից, 01.10.1971թ.-ի դրությամբ, ածխաթթվային հանքային ջրի և ազատ ածխաթթու գազի շահագործողական պաշարները յոթ շատրվանող հորատանցքերով (արձանագրություն թիվ 6530, 19.04.1972թ.) հաստատվել են հետևյալ քանակներով.

- հանքային ջրի պաշարներ՝ 39.4/վրկ կամ 3403.0 մ³/օր,
- ազատ ածխաթթու գազի պաշարներ՝ 35.6մ³/մ³ կամ 50.0գ/լ:

5Մ հորատանցքով հանքային ջրի պաշարն ըստ B կարգի կազմում է 6.0լ/վրկ կամ 518.0մ³/օր:

Հորատված հետախուզական հորատանցքերում կատարված հիդրոերկրաբանական աշխատանքները հնարավորություն են տվել բնութագրել Լիճքի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի երկրաբանական առանձնահատկությունները և հիդրոերկրաբանական պայմանները, որոնց արդյունքների համաձայն հանքավայրի հանքային ջրերի շահագործողական պաշարները կարող են օգտագործվել որպես բուժիչ-խմելու ջուր՝ շշալցման և հանքաջրաբուժական նպատակով, ինչպես նաև ազատ ածխաթթու գազի



կորզման համար: Հանքային ջրերը հանդիսանում են տեկտոնական գոտու հետ կապված ստորերկրյա հանքային ջրի բեռնաթափման արդյունք, հորատանցքերը կարող են շատրվանել հիմնականում բացասական դինամիկ մակարդակի պայմաններում: Հորատանցքերով հայտնաբերված Լիճքի հանքային ջրերը բնութագրվում են հիմնականում միատեսակ քիմիական կազմով՝ քլորիդ-հիդրոկարբոնատային, նատրիումային: Հանքային ջրի ստատիկ մակարդակը 1.4մ երկրի մակերևույթից ցածր է, ջերմաստիճանը՝ 24.8 °C, ծախսը՝ 6.0լ/վրկ, հանքայնացումը 8.2գ/լ, լուծված ածխաթթու գազի պարունակությունը՝ 1.65գ/լ, իսկ ազատ գազինը՝ 7.94գ/լ:

<<Տեխնոման>> ՍՊ ընկերության կողմից թիվ 5P հորատանցքից արդյունահանման համար նախատեսվող հանքային ջրի քանակը կազմում է 5.5լ/վրկ, կամ 173448.0մ³/տարի, որից կորզվող ազատ ածխաթթու գազի ծավալը կազմում է 988650.0մ³/տարի: Հորատանցքը գտնվում է 2P հորատանցքից 810.0մ դեպի հարավ-արևելք, Լիճք-Մարտունի ճանապարհի ճախ կողմում: Հորատանցքի բացարձակ բարձրությունը 1922.0մ է: Հորատանցքի աշխարհագրական կոորդինատներն են՝ հյուսիսային լայնության՝ 40° 09' 32.28", արևելյան երկայնության՝ 45°15'12.54": Ջրհավաք հորատանցքի շահագործման տևողությունը նախատեսված է 50 տարի: Հանքավայրի հանքային ջրի արդյունահանման ժամկետը լրանալուց հետո ջրհավաք հորատանցքի բերանը պետք է փակվի, հանքավայրը կոնսերվացվի:

Լիճքի հանքավայրի թիվ 5P հորատանցքի շահագործումն իրականացվելու է փակ ռեժիմով, ջրհավաք հորատանցքի գլխամասը սահմանված կարգով պետք է կահավորվի համապատասխան սարքավորումներով (փականներ, չափիչ սարքեր, կապարակնքված գազաչափ, գազանջատիչ): Ջրհավաք հորատանցքը իր գլխամասային սարքավորումներով շրջափակվելու է մետաղական ցանկապատով (ջրհավաքի համար սահմանելով սանիտարական պահպանության առաջին՝ խիստ ռեժիմով գոտի): Մինչև հորատանցքի շահագործումը հորատանցքի բերանի շուրջ իրականացվելու է կառուցվածքների ջրամեկուսացում, որով բացառվելու է մակերևութային աղտոտված ջրերի մուտքը դեպի հորատանցք:

Թիվ 5P հորատանցքից արդյունահանված հանքային ջուրը՝ 108մմ տրամագծի պոլիէթիլենային (խմելու որակի) խողովակաշարով Մարտունի-Լիճք ճանապարհին զուգահեռ, վերգետնյա տեղափոխվելու է ածխաթթու գազի կորզման արտադրամաս:

<<Տեխնոման>> ՍՊ ընկերությունը հանքային ջրից ազատ ածխաթթու գազի կորզման գործընթացը նախատեսում է իրականացնել Լիճքի համայնքի վարչական տարածքում գտնվող ընկերությանը պատկանող ածխաթթու գազի կորզման արտադրամասում, որը գտնվում է 5P հորատանցքից 1150.0մ հեռավորության վրա: Արտադրամասը հագեցած է ժամանակակից տեխնոլոգիաներով և սարքավորումներով: Ածխաթթու գազի կորզումից հետո հանքային ջուրը հեռացվելու է կոյուղի կամ դրենաժային կառույց:

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության հանքային ջրերի շահագործմանը զուգահեռ նախատեսվում է իրականացնել հորատանցքի շահագործման ռեժիմի, ջրերի որակական, քանակական բնութագրերի և տեխնիկական վիճակի ուսումնասիրություններ՝ ջուրը աղտոտումից, սպառումից և տեխնածին վնասակար ազդեցությունից զերծ պահելու նպատակով: Նախատեսված է նաև ջրի և ազատ ածխաթթու գազի ծախսի, ջերմաստիճանի,



ճնշման (մակարդակի) մշտադիտարկումներ (մոնիթորինգ), ինչպես նաև ջրի նմուշարկումներ և լաբորատոր հետազոտություններ՝ որոշելու համար կոշտությունը, հանքայնացումը, չոր նստվածքը, թթվայնությունը, ջրի ֆիզիկական հատկությունները՝ հանքավայրում քանակական և որակական փոփոխությունները գնահատելու համար:

Պայմանավորված աշխատանքների բնույթով և տեսակներով, հանքային ջրի արդյունահանման ժամանակ լանդշաֆտի ամբողջականության, հողային ռեսուրսների, կեսաբազմազանության և մթնոլորտային օդի վրա զգալի ազդեցություններ չեն կանխատեսվում:

Փորձաքննության փուլերում Լիճքի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 5P հորատանցքից օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Գեղարքունիքի մարզի Լիճք համայնքում անցկացվել են հանրային քննարկումներ /հինգ քննարկում/: 19.09.2018թ. Լիճք համայնքում անցկացված հանրային քննարկման ընթացքում Լիճքի հանրությունը իր մտահոգությունն է արտահայտել հանքային ջրի անկազմակերպ հեռացման, հորատանցքի շահագործման ընթացքում հնարավոր վթարային իրավիճակների հետևանքների (քանի որ հորատանցքը գտնվում է բնակավայրի տարածքում), ինչպես նաև ընկերության կողմից նախատեսվող սոցիալական ու ներդրումային ծրագրերի և ստեղծվող աշխատատեղերի վերաբերյալ:

Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ պահանջներով: Փորձաքննական գործընթացում ՇՄԱԳ հաշվետվությունը մի քանի անգամ նշված Օրենքի պահանջներով ուղարկվել է լրամշակման և լրակազմման: Հաշվետվությունը պահանջվող նյութերով և հիմնավորումներով չի լրամշակվել, և չեն ապահովվել Օրենքի պահանջները:

Փորձաքննական հիմնավորումներ:

1. Լիճքի ածխաթթվային հանքային ջրի և ազատ ածխաթթու գազի շահագործողական պաշարները հաշվարկվել են 1968-1971թթ.-ին կատարված հիդրոերկրաբանական հետախուզական աշխատանքների արդյունքում: Նախկին ԽՍՀՄ Պաշարների Պետական Հանձնաժողովի (ՊՊՀ) կողմից 01.10.1971թ.-ի դրությամբ յոթ շատրվանող հորատանցքերով (արձանագրություն թիվ 6530, 19.04.1972թ.) հաստատվել են ածխաթթվային հանքային ջրի և ազատ ածխաթթու գազի շահագործողական պաշարներ, որոնք կարող են օգտագործվել շշալցման, բուժման և ազատ ածխաթթու գազի կորզման նպատակով:

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության նախատեսվում է հաստատված պաշարներից միայն ածխաթթու գազի կորզում, իսկ հանքային բուժիչ, խմելու ջուրը նախատեսվում է լցնել կոյուղի, ինչը հակասում է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված գնահատման և փորձաքննության կարևորագույն հիմնադրույթին և սկզբունքին՝ բնական պաշարների արդյունավետ, համալիր և բանական օգտագործման պահանջին:

2. Փորձաքննության գործընթացում չեն ապահովվել Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 2)-րդ, 3)-րդ, 7)-րդ 9)-րդ, 12)-րդ կետերի պահանջները:

- այլընտրանքային տարբերակների դիտարկում ներառյալ՝ նախատեսվող գործունեությունից հրաժարման (զրոյական) տարբերակը, ընտրված տարբերակի հիմնավորումը՝ շրջակա միջավայրի պահպանության, տնտեսական, սոցիալական տեսանկյունից:
- շրջակա միջավայրի հնարավոր տնտեսական վնասի գնահատումները:
- արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի նկարագրություն՝ ազդեցության ծավալը, նվազեցման, կամ վերացման ուղիները և միջոցները:
- գործունեության վերաբերյալ ընդհանուր պատկերացում կազմող ամփոփ բովանդակության նյութերը՝ քարտեզներ, սխեմաներ, գրաֆիկներ, աղյուսակներ և այլն:

3. Չի ապահովվել առողջապահության նախարարի 2002թ. նոյեմբերի 29-ի թիվ 803 հրամանի և հրամանում լրացում կատարելու մասին 2016թ. դեկտեմբերի 21-ի թիվ 45-Ն հրամանի պահանջները՝ ստորերկրյա ջրառների խմբի սանիտարական պահպանման առաջին գոտու սահմանման մասով:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով վերը նշված փորձաքննական հիմնավորումները՝ «Տեխնոման» ՍՊԸ կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Լիճքի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 5Ք հորատանցքից օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է բացասական եզրակացություն:

Տնօրենի տեղակալ՝

Գլխ. մասնագետ՝



Ա. Դոնոյան

Հ. Մկրտչյան